



- Visegrad Fund

ԵՐԱՇՏԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

2023 Ապրիլ


Բովանդակություն

<i>1. Ջերմաստիճանի ամսական շեղում.....</i>	<i>3</i>
<i>2. Տեղումների ամսական շեղում.....</i>	<i>3</i>
<i>3. Երաշտի ինտենսիվության ինդեքսներ:.....</i>	<i>4</i>
3.1 Բուսականության վիճակի ինդեքս (VCI)	4
3.2 Բուսականության նորմալացված տարբերության ինդեքս (NDVI).....	5
3.3 Գյուղատնտեսական սթրես ինդեքսը (ASI)	5
3.4 Օդերևութաբանական երաշտի ինտենսիվության գնահատումը	6


1. Ջերմաստիճանի ամսական շեղում

Ապրիլ ամսին օդի միջին ամսական ջերմաստիճանները գերազանցել են նորման (1981-2010թթ.): Հայաստանի 43 օդերևութաբանական կայանների փաստացի դիտարկումների համաձայն հիմնականում օդի միջին ամսական ջերմաստիճանները եղել են նորմայից բարձր մինչև 1-2°C-ով: Առավելագույն շեղումներ գրանցվել են հարավային շրջաններում (Վայոց Ձոր, Սյունիք)՝ 2-3°C: Մինևույն ժամանակ, ERA5-Land գլոբալ ռեանալիզի միջին ամսական ջերմաստիճանների շեղումները հաջողությամբ ցույց են տալիս ապրիլ ամսվա նորմայից բարձր ջերմաստիճանները Հայաստանի տարածքում:

Monthly Temperature anomalies Armenia
April 2023 (1981-2010 base period)




Monthly Temperature anomalies Armenia
April 2023 (1981-2010 base period), ERA5-Land




2. Տեղումների ամսական շեղում

Ապրիլ ամիսը ուղեկցվել է նորմայից բարձր տեղումներով: Առավել խոնավ է եղել Հայաստանի հյուսիս-արևմտյան շրջանները, որտեղ դիտվել է ապրիլ ամսվա տեղումների նորմայի ավելի քան 150%-ը, առավելագույն շեղում գրանցվել է Աշոցքում՝ 113մմ, կամ նորմայի 183%-ը: Փաստացի դիտարկումները ցույց են տալիս, որ պայմանավորված Հայաստանի լեռնային ռելիեֆով, առանձին հատվածներում դիտվել են լոկալ բնույթի տեղումներ: Հայաստանի տարածքի մեծ մասում տեղումների քանակը ապրիլին գերազանցել է նորման՝ կազմելով նորմայի 100-120%, տեղ տեղ՝ 140%-ը: Ի տարբերություն փաստացի դիտարկումների՝ ERA5-Land գլոբալ ռեանալիզի տեղումների քանակի տվյալները ցույց են տալիս, որ ապրիլին Հայաստանի շրջանների մեծ մասում տեղումների քանակը եղել է նորմայից պակաս: Հյուսիսային շրջաններում դեիտվել է տեղումների քանակի նորմայի 60-80%-ը, իսկ մնացած շրջաններում ապրիլ ամսվա տեղումների քանակը կազմել է նորմայի 40-60%-ը:

Monthly Precipitation anomalies (%) Armenia
April 2023 (1981-2010 base period)



Monthly Precipitation anomalies(%) Armenia
April 2023 (1981-2010 base period), ERA5-land




3. Երաշտի ինտենսիվության ինդեքսներ:

3.1 Բուսականության վիճակի ինդեքս (VCI)

(VCI)-ը ցույց է տալիս թե ինչպիսին է բուսականության վիճակը տվյալ ժամանակահատվածում համեմատած երկաթամկետ կտրվածքով բուսականության միջին վիճակին՝ պայմանավորված տեղանքի կլիմայական պայմաններով: VCI-ի ավելի ցածր և բարձր արժեքները ցույց են տալիս, համապատասխանաբար, բուսականության վատ և լավ պայմանները:


Ինչպես երևում է FAO կայքէջում հրապարակված ապրիլ ամսվա VCI-ի քարտեզից՝ Հայաստանի տարածքի մեծ մասում բուսականությունը գտնվում է նպաստավոր պայմաններում, բացառությամբ որոշ լեռնային շրջանների և Արարատյան դաշտի առանձին հատվածների:



3.2 Բուսականության նորմալացված տարբերության ինդեքս (NDVI)


Բուսականության նորմալացված տարբերության ինդեքսը (NDVI) ֆոտոսինթետիկ ակտիվ կենսազանգվածի ցուցիչ է, որը ստացվում է համեմատելով կլանված տեսանելի կարմիր լույսի և արտացոլված ինֆրակարմիր լույսի քանակը:

Ելնելով FAO պաշտոնական կայքէջում տեղադրված ապրիլ ամսվա NDVI-ի արդյունքների «կարմիր-կանաչ» գունային տիրույթում գտնվող քարտեզից՝ Հանրապետության որոշ լեռնային շրջաններում և Արարատյան դաշտում, որոնք պատկերված են կարմիր-նարնջագույն-դեղին երանգներով, ցույց են տալիս նոսր և բացակայող բուսածածկ, իսկ հանրապետության տարածքի մեծ մասում կանաչի երանգները ցույց են տալիս նորմալ և նորմալից խիտ բուսածածկ:



3.3 Գյուղատնտեսական սթրեսի ինդեքսը (ASI)


Գյուղատնտեսական սթրեսի ինդեքսը (ASI) ցուցիչ է, որով գնահատվում է գյուղատնտեսական երաշտի ինտենսիվությունը: Ինչպես երևում է ապրիլ ամսվա տվյալներից հանրապետության տարածքում գյուղատնտեսական երաշտ չի դիտվել:



3.4 Օդերևութաբանական երաշտի ինտենսիվությանը գնահատումը

Երաշտի ինտենսիվությունը գնահատվել է Սելյանինովի հիդրոթերմիկ գործակցով՝ ըստ 38 օդերևութաբանական կայանների տվյալների: Ինչպես երևում է ապրիլ ամսվա ընթացքում Հայաստանի տարածքում երաշտային պայմաններ չեն դիտվել:

Drought Monitoring, 21-30 April, 2023



Այսպիսով վերլուծելով փաստացի ջերմաստիճանի և տեղումների շեղումները, ինչպես նաև բուսականության վիճակի ինդեքսների արժեքները կարող ենք եզրակացնել, որ ապրիլ ամսին շրջանների մեծ մասում դիտված եղանակա-կլիմայական պայմանների արդյունքում Հանրապետությունում երաշտային պայմաններ չեն դիտվել: